- fixing catapult so that drone can fly against the wind;
- assembling drones;
- deploying ground control station (GCT);
- checking connections and operation of mobile elements of the plane;
- loading route program into the drone;
- loading the coordinates of return of the drone;
- start the drone from a starting device or elastic catapult;
- implementation of aerial photography in the automatic mode;
- monitor the implementation of the rout program, speed of the drone, wind speed, voltage in batteries, as well as control over the remaining time of the flight;
- landing the drone in automatic mode;
- copy of telemetry data and digital aerial photographs produced by the drone;
- preliminary analysis of digital images of the area to identify disruption and non-triple overlap
- analysis and examination of UAV, packing in a carrying case;
- folding of ground control station.

Cameral works

The resulting high quality photos have the required overlap and photographing centers linked with a GPS surveying equipment can process the materials with the help of special software as quick and as accurate as possible. The output of the processing of the images will be presented as photo maps, photo plans or orthophoto plans. The accuracy of the results depends on the height of the photo shoot, weather conditions and the resolution of the applied photo equipment. At the moment, the accuracy of orthophoto plans meets the requirements of geodesy, topography and cadaster, and the produced 3D models

of the area allow to quickly assess the quantity and site of construction works, mining, etc.

Cameral works including:

- Copying the resulting data - photos, telemetry, field data from ground-based GPS-receivers - in the photogrammetric station;
- Processing of data from the GPS receivers: receiving point coordinates of horizontal and vertical provision of images, centers photography;
- visual assessment of the quality of photos and sorting of images;
- download images and telemetry into special software;
- formation of routes and division into blocks;
- installation of benchmarks;
- photogrammetric processing;
- digital elevation modelling (height matrix);
- production of digital orthophoto plan;
- marking on the maps;
- interpretation and digitization of the facilities in the area;
- filling the semantic information of facilities;
- production of digital electronic map.

The completely new mapping solution Trimble® UX5 sets new standard for fast and secure data collection offering fully complete system based on the most powerful and advanced technologies, such as reverse and automatic systems of control and safety. (<http://uas.trimble.com/ux5>).

3. Performed research

Before starting any survey work it was necessary to study the nearby points in the national benchmark grid. After studying the arrangements of the geodetic points in the reservoir area it was decided to obtain coordinated of 3 geodetic points which are kept in Center of Geodesy and Cartography SNCO.

It should be noted that in the Republic of Armenia a real time functioning grid is in place which facilitated our work since the GPS equipment are working within the same coordinate reference system. The survey team also conducted field visits to inspect each geodetic point and to measure them with our equipment in order to make sure that the coordinates measured by our team are within the same reference system. The monitoring results are given below.

Table 1.

The measured coordinates of geodetic points.

Name	X	Y	H
Hoxatumb	4461685.923	452858.364	1320.379
Arapar	4462282.13	450652.861	1383.07
Eghvard	4467280.733	457180.435	1384.965

Table 2.

The difference between the given and measured coordinates of geodetic points.

Name	ΔX	ΔY	ΔH
Hoxatumb	-0.007	-0.017	-0.007
Arapar	-0.015	0.002	0.007
Eghvard	-0.103	-0.105	0.511

The analysis of the received results showed that our GPS coordinates differ from the coordinates of Center of geodesy and cartography for a few millimeters, which is completely acceptable since we had been working with RTK method.

Only Yeghvard geodetic point was problematic since the difference exceeded the acceptable margin. Our studies and surveys revealed that the coordinates of Yeghvard geodetic point was defective.

After studying the National benchmark grid points our working group started examining the target area and selecting suitable locations for the new benchmark grid. The experts of the working team decided to install 6 geodetic points in compliance with the following requirements:

1. Benchmarks installed below the freezing zone with depth of 1-1.2 m.
2. DN 100 mm steel pipes were used as working material which were afterwards painted red and numbered with white paint.
3. GPS monitoring was conducted for each point and the coordinates as well as the absolute elevations were established.
4. Topographic survey at Yeghvard reservoir with unmanned vehicle

The equipment described in the chapter above was used for the survey of Yeghvard reservoir. Since the reservoir area is about 1540 ha it was impossible to complete the survey with a single flight. Therefore, the area was split into 12 sections, Figure 2




Figure 1. The arrangement of survey sections

The selection of sections was made based on the peculiarities of the given relief. For each section a safe takeoff and landing place was chosen (Figure 3).




Figure 2. Establishing takeoff and landing points by means of special software

From the very beginning it was intended to carry out all survey works within RA reference system so that later on no problem arises with regards to land alienation and that all the results can be connected to the cadastral map.

In order to meet this requirement land benchmarks of 1.3*1.3 m were installed along the fringe and in the center of each section and the coordinates of those benchmarks were established via Trimble R7 GPS system before starting the flights.

Five or six similar benchmarks were selected for each section. Their coordinates were transferred to Trimble Business Center and with special instructions the photos were transferred to WGS-84 coordinate system used in Armenia. It should also be noted, that in Armenia the system of Baltic Sea is used as basis for elevations. The survey works were also implemented within this system.

More than 150 GB information was collected through aerial survey which was processed with special licensed software packages. These packages were used for the following important actions:

1. Transferring survey photos and flight file of .jxl format to Trimble Business Center software system;
2. Adjustment and scaling of adjacent photos;
3. Loading the coordinates of land benchmarks into the system which, as described earlier, are produced by measuring the centers of black and white benchmarks by means of GPS.
4. Each benchmark is visible in more than ten photos. By choosing the benchmark and showing its location adjustment is being done bringing all photos to the required coordinate and elevation system;

5. After absolute adjustment the point cloud is created which is used for getting the surface and contour lining;
6. After creating the required form of contour lines the file is transferred to CAD system and processed.

After final processing the contour lines of all sections were merged resulting in one complete unit for surface area of 1,540 ha.

Survey works in the feeding and diversion canals were implemented following the same principle except 3rd canal which was measured with GPS and total stations.




Figure 3. Conventional survey of the conveyance system alignment

This alignment is characterized by complex relief and built-up area. Before starting the survey works a survey grid was created on the site. Afterwards the relief was surveyed by means of total station. More than 3,900 points were surveyed which were later processed by AutoCAD program.

Arzni-Shamiram irrigation canal was also surveyed with the abovementioned method. The contours of the canal are presented with absolute accuracy.

Conclusion

Based on the measure results and the spent time we have compared traditional geodetic measurements and the cartographic works with the UAV shown in the 3th table.

Table 3.

The difference of traditional geodetic measurements and the cartographic works with UAV

	UAV	GNSS	Comments
Area	1.5 km ²	1.5 km ²	
Marking and measuring earth study points	1 ¼ hours	---	Study points are not necessary for all tasks
Time settings	15 min	15 min (in day)	
Time measuring	45 min	30 ½ hours (4 days)	
Time folding	15 min	15 min (in day)	
Time treatment	4 hours (2.80 GHz Intel Core i7, 16 GB RAM)	---	The data can be processed at night
Overall time	6 hours 30 min	32 hours 30 min	5time faster than GNSS
Density measuring	4 centimeters (with altitude 120 meters)	15 meters	Maximum density 2.4 centimeters
In terms of accuracy	2 centimeters	1 centimeters	
Height accuracy	4 centimeters	2 centimeters	

We have compared the works on the area 1.5 km². Cartographic works with GNSS will take 4 days. Cartographic works with the UAV for the same area take 40 min. Data processing time for both measurements is the same but our measurements data were processed automatically. After comparing it became evident that the measurement method used and offered by us in term of time consumption is 5 times productive than any traditional measurement method.

After this analysis, for big areas and with difficult terrain (if scaling factor is equal or bigger to 1:1000), we recommend to do cartographic works by the aero photogrammetric method.

REFERENCE

GNSS Follow-up to the Third United Nations Conference on the Exploration and Peaceful Uses of Outer Space (UNISPACE III) - Report of the action team on Global Navigation Satellite Systems (GNSS), UN, ST/SPACE/24, 2004.

Guidelines for the use of GNSS in land surveying and mapping, Royal Institution of Chartered Surveyors (RICS), Practice Standards, 2010

<http://uas.trimble.com/ux5>

http://trl.trimble.com/docushare/dsweb/Get/Document-804832/UX5_AerialImagingUserGuide_v2.2.3_RevA_English.pdf

<https://www.e-education.psu.edu/natureofgeoinfo/book/export/html/1620>

Գրախոսող՝ Հ. Բաբայան

ԵՂՎԱՐԴԻ ԶՐԱՄԲԱՐԻ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ս. Վ. Թովմասյան, Ն. Խ. Գյուրջյան, Ա. Ա. Մարգարյան, Ա. Լ. Վասիլյան

Ամփոփում

Հոդվածում ներկայացված են Եղվարդի ջրամբարում իրականացված գեոդեզիական չափագրման արդյունքները, որոնք կատարվել են երկու տարբեր եղանակներով: Ստացված արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ անօդաչու թռչող սարքի կիրառումը առավել արդյունավետ է ինչպես չափագրման ճշտության տեսանկյունից, այնպես էլ պահանջվող ժամանակից: Վերջինիս կիրառումը հատկապես արդյունավետ է դժվար հասանելի վայրերում հանույթ իրականացնելիս:

ГЕОДЕЗИЧЕСКИЕ РАБОТЫ НА ВОДОХРАНИЛИЩЕ ЕГХВАРД

С. В. Товмасян, Н. Х. Гюрджян, А. А. Маргарян, А. Л. Василян

Резюме

В статье представлены геодезические измерения, выполненные на Егвардском водохранилище с использованием двух различных методов. Сравнение результатов измерений показало, что геодезические работы с применением дрона более эффективны, как с точки зрения точности измерений, так и требуемого времени. Применение дрона особенно эффективно для геодезических измерений в труднодоступных местах.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԱՇՈՏ ԻԼՈՑԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(1935 - 2016)



2016թ. սեպտեմբերին, կարճատև հիվանդությունից հետո, ԱՄՆ-ում կյանքից հեռացավ Հայաստանի օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանության, միներալոգիայի, երկրաքիմիայի և մետաղաձուլության բնագավառներում ճանաչված գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ռուսաստանի ԲԳԱ անդամ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Իլտյի Կարապետյանը**:

Ա.Կարապետյանը ծնվել է 1935թ. ապրիլի 20-ին, Էջմիածին քաղաքում, զինծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գյումրիում: 1953-1958թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-երկրաբանի որակավորում:

1958-1991թթ. Ա.Կարապետյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, զբաղեցնելով գիտաշխատողի, ավագ գիտաշխատողի, կանխատեսումային-մետաղաձուլական լաբորատորիայի վարիչի, այնուհետև, 1986-1991թթ., գիտության գծով տնօրենի տեղակալի պաշտոնները: 1960-1963թթ. սովորել է ԵԳԻ ասպիրանտուրայում և 1964թ., հաջողությամբ պաշտպանելով գերմանիումի երկրաքիմիային և հանքաբանությանը նվիրված թեկնածուական ատենախոսությունը, ստացել է երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի հանքային ֆորմացիաներում հանդիպող հազվագյուտ և ազնիվ տարրերի երկրաքիմիային և միներալոգիային առնչվող հարցերը: Բազմամյա հետազոտությունները Ա.Կարապետյանին հնարավորություն ընձեռեցին Հայաստանի տարբեր՝ պղինձ-մոլիբդենային, ոսկի-բազմամետաղային, պղինձ-հրաքարային ֆորմացիաների հանքավայրերում առաջին անգամ հայտնաբերել հազվագյուտ և ազնիվ այնպիսի միներալներ, ինչպիսիք են գերմանիտը, ռենյերիտը և տելուրիտները, բացահայտել նրանց առաջացման պայմանները և ծագմանաբանական առանձնահատկությունները: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին «Հազվագյուտ և ազնիվ տարրերը Հայաստանի հանքային ֆորմացիաներում» կոլեկտիվ մենագրության մեջ, որն

արժանացավ Հայաստանի Պետական մրցանակի գիտության բնագավառում (1974թ.):

1979թ. Մոսկվայի Հազվագյուտ տարրերի միներալոգիայի և երկրաքիմիայի ինստիտուտում (ИМГПЭ) Ա.Կարապետյանը հաջողությամբ պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը «Փոքր Կովկասի Փամբակ-Ջանգեզուրյան մետաղածնական գոտու հանքային ֆորմացիաները» թեմայով:

Նոր պատկերացումների լույսի ներքո նա կարողացավ ներկայացնել Հայաստանի տարածքի երկրակեղևի սահմաններում հանքայնացման համար բարենպաստ մետաղածնական գոտիների և հանքային հանգույցների առաջացման հնարավորությունները, դասակարգել բազմաէտապային, երբեմն նաև բազմաֆորմացիոն հանքավայրերի տիպերը, առաջարկելով «հանքային ֆորմացիա» հասկացության նոր սահմանում: Սա հնարավորություն է տալիս նույն հանքային ֆորմացիայում խմբավորել հանքավայրեր (օրինակ՝ Սոթքի և Մեղրաձորի ոսկի-տելուր-բազմամետաղային հանքավայրերը), որոնք բնութագրվում են առաջացման յուրահատուկ երկրաքիմիական և երկրաբանական պրոցեսներով: Այս գիտական մոտեցումներն ամփոփվեցին «Փոքր Կովկասի Փամբակ-Ջանգեզուրյան մետաղածնային գոտու ներծին հանքային ֆորմացիաները» մենագրության մեջ (1982թ.), որտեղ տրվում է Փամբակ-Ջանգեզուրյան մետաղածնային գոտու կանխատեսումային-մետաղածնական գնահատականը:

80-ական թվականներին Ա.Կարապետյանը, իր խմբի հետ միասին, հայտնաբերեց և ուսումնասիրեց Գոմշատեղի (Սյունիքի մարզ) ֆումարոլ-սոլֆատարային ծագման օպալիտ-քվարցիտների նոր տիպի բարձրորակ սիլիկահողի հանքավայր միոցենի հրաբխային հաստվածքում:

Ա.Կարապետյանը հեղինակ և համահեղինակ է մի շարք մենագրությունների և շուրջ 150 գիտական աշխատությունների, հրատարակված հանրապետական և միջազգային գիտական մամուլում, ինչպես նաև ձեռագիր հաշվետվությունների և մասնագիտացված երկրաբանական քարտեզների:

Գիտական հետազոտական աշխատանքը նա հաջողությամբ զուգորդել է ակտիվ կազմակերպչական և հասարակական գործունեության հետ. վարել է Հայաստանի ԳԱ արհմիության միացյալ կոմիտեի նախագահի, ԳԱ Նախագահությանն առընթեր ցուցահանդեսային գիտական խորհրդի նախագահի, ինչպես նաև ԳԱ Նախագահության գործերի կառավարիչի պաշտոնները:

1989թ. Ա.Կարապետյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ, 1996թ.՝ ակադեմիկոս:

1991-1993թթ. Ա.Կարապետյանը վարել է ՀՀ Ընդերքի և հանքային ռեսուրսների նախարարի պաշտոնը:

Իր արդյունավետ և անխոնջ աշխատանքային գործունեության համար Ա.Կարապետյանն արժանացել է Հայաստանի կառավարական

պարզների, ինչպես նաև Ռուսաստանի ԲԳԱ հուշամեդալների, նրան շնորհվել է Դուբնայի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում, նա ընտրվել է Նյու-Յորքի Գիտությունների ակադեմիայի, Հայաստանի և Միջազգային Ճարտարագիտական մի քանի ակադեմիաների անդամ:

1994թ.-ից Ա.Կարապետյանը բնակություն հաստատեց ԱՄՆ-ում, որտեղ, մինչև 2004թ., աշխատել է "Ebarhart and Stone" ընկերությունում ավագ երկրաբանի պաշտոնում՝ մասնակցելով բազմաթիվ նախագծերի ստեղծմանը և իրագործմանը:

Այդ տարիներին Ա.Կարապետյանը, որպես գիտական խորհրդական մասնակցելով հայ-ամերիկայն ճարտարագիտական ընկերության գործունեությանը, պատվով ներկայացրել է Հայաստանի գիտական նվաճումների ոլորտը: Միաժամանակ նա շարունակել է Հայաստանի երկրաբանական խնդիրներին առնչվող գիտական հետազոտությունները՝ հրատարակելով հոդվածներ և հանդես գալով հայալեզու պարբերականներում Հայաստանի երկրաբանության տարբեր հարցերին նվիրված նյութերով: Նույնիսկ, վերջին տարիներին, արդեն անցած լինելով վաստակած հանգստի, նա միշտ ակտիվորեն հետևում էր Հայաստանում գիտության և, մասնավորապես, երկրաբանական գիտության առջև ծառացած խնդիրներին, ողջունում էր միջազգային համագործակցությանը միտված Հայաստանի երկրաբանների, մանավանդ երիտասարդ գիտնականների ջանքերը:

Ա.Կարապետյանի, երկրաբանության բնագավառում ճանաչված գիտնականի, գիտակազմակերպչական ոլորտի ակտիվ գործչի, ընկերասեր անձնավորության, հոգատար ամուսնու և հոր հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների և բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն


ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՄԵՐԳԵՑ ՀԱՅԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(1932 - 2016)



Ծանր, կարճատև հիվանդությունից հետո 2016թ. օգոստոսի 26-ին կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի վաստակաշատ նվիրյալներից մեկը, հանրապետության և նրա սահմաններից դուրս հրաբխագիտության ասպարեզում ճանաչված մասնագետ, հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու **Մերգեյ Հայկի Կարապետյանը**:

Ս.Կարապետյանը ծնվել է 1932թ. հոկտեմբերի 11-ին Երևանում ծառայողի ընտանիքում: 1952-1957թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը երկրաբանական հանույթ և օգտակար հանածոների հանքավայրերի որոնում մասնագիտությամբ, ստանալով ինժեներ-երկրաբանի որակավորում:

1955թ.-ից, դեռ ուսման տարիներից սկսած մինչև վախճանը, շուրջ 60 տարիների ընթացքում, Ս.Կարապետյանը անընդմեջ աշխատել է ԵԳԻ-ում:

1961-1964թթ. սովորել է ասպիրանտուրայում անվանի գիտնական Վ.Պետրովի ղեկավարությամբ և 1968թ., Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ Մետաղական հանքավայրերի երկրաբանության, պետրոգրոֆիայի, միներալոգիայի, երկրաքիմիայի ինստիտուտում (ИГЕМ АН СССР), հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Հայաստանի նորագույն լիպարիտային հրաբուխների կառուցվածքի և կազմի առանձնահատկությունները» թեմայով, ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ս.Կարապետյանի հետագա տարիների ծավալուն երկրաբանական հետազոտությունները ընդգրկում են Հայաստանի տարածքի պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխայնությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Առաջին հերթին նրա ուսումնասիրությունները նվիրված են Հայաստանում լայնորեն արտահայտված թթու կազմի գմբեթաձև խմբի հրաբուխների առաջացման պայմանների, նյութական

կազմի, կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման հարցերին, բերելով նրան տվյալ ասպարեզում քաջատեղյակ մասնագետի համբավ: Այս աշխատանքները ուղեկցվում էին յուրաքանչյուր հրաբխային կառույցի մանրակրկիտ երկրաբանա-հրաբխագիտական և երկրաբանա-պետրոգրաֆիական քարտեզների կազմմամբ ինչը, բացի գիտական արժեքից, ունի կարևոր կիրառական նշանակություն, որովհետև այս տիպի հրաբուխների գործունեության հետ են կապված շինանյութերի արտադրության և տնտեսության տարբեր ոլորտներում լայն կիրառություն գտած հանքային հումքի այնպիսի տեսակներն, ինչպիսիք են պեռլիտները, պեմզաները, որոշ տիպի տուֆերը, օբսիդիանները և այլն:

Մ.Կարապետյանի կողմից մշտապես հատուկ ուշադրության առարկա էր հանդիսացել Հայաստանում լայնորեն տարածված օբսիդիանների ուսումնասիրությունը, ինչը մի կողմից պարզաբանում է նրանց առաջացման և ձևավորման գիտական հարցերը, մյուս կողմից ներկայացնում բազմատեսակ գունագեղ օբսիդիանները, որպես նրբարվեստ կիսաթանկարժեք բնական ակնագործական քարատեսակ: Կյանքի վերջին օրերին նրա հեղինակությամբ («Գիտության աշխարհում», հ.2, 2016թ.) լույս տեսավ ստվար ակնարկ նվիրված երկրաբանական, գիտապատմական, դիցաբանական և ժողովրդական արվեստներում օբսիդիանի դերի և նշանակության վերաբերյալ:

Մ.Կարապետյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 110 գիտական աշխատությունների՝ այդ թվում 4 մենագրությունների, 14 ձեռագիր հաշվետվությունների, ինչպես նաև միջազգային և հանրապետական գիտաժողովներին ներկայացված բազմաթիվ թեզիսների:

Գիտական գործունեությանը զուգընթաց Մ.Կարապետյանի խառնվածքին հատկանշական էր նվիրումն ակտիվ կազմակերպչական աշխատանքներին ինստիտուտում և, հատկապես, դպրոցականների և երիտասարդների շրջանում: Երկրաբանությանը նվիրումով նրա երկարամյա աշխատանքի գնահատականի վկայություն է հանդիսանում տարբեր գերատեսչությունների կողմից նրան շնորհված բազմաթիվ պատվոգրերը, գովեստագրերը, դիպլոմները, ինչպես նաև 2015թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության հուշամեդալը:

Մ.Կարապետյանի՝ փորձառու մասնագետի, շատ համեստ, ազնիվ և ընկերասեր, մեծ հարգանք վայելող անձնավորության, անփոխարինելի ամուսնու, հոր ու պապիկի հիշատակը վառ կմնա նրա ընկերների, աշխատակիցների և բոլոր ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն

ԲՆԱԳՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրում հրատարակվում են Հայաստանում և արտասահմանյան երկրներում երկրաբանության, երկրաֆիզիկայի, սելսմոլոգիայի, ֆիզիկական աշխարհագրության և Երկրի մասին գիտությունների այլ ասպարեզներում տարվող տեսական, փորձարարական և կիրառական հետազոտությունների արդյունքները:

Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզվով, տպագրության համար պատրաստ վիճակում, հրատարակման թույլտվության և ուղեկցող նամակի հետ միասին: Տեղեկագրում բոլոր հրատարակումները առանց հոնորարի են:

2. Հոդվածի ծավալը, ներառյալ պատկերները, որոնց թիվը չպետք է անցնի 3-ից, ներառյալ “ա”, “բ” և այլն, աղյուսակները, ամփոփագիրը, օգտագործված գրականության ցանկը, պետք է կազմի մոտ 10 էջ: Տեքստը անհրաժեշտ է պատրաստել Microsoft Word-ով Times Phonetic Unicode տառատեսակի օգտագործմամբ, 12 չափով և 1.5 ինտերվալով, առանց տողադարձերի: Դաշտերը պետք է լինեն. Չախից՝ 3սմ, վերևից և ներքևից՝ 2.5սմ և աջից՝ 1սմ: Հոդվածը ներկայացվում է 2 օրինակով, յուրաքանչյուրը հեղինակի (հեղինակների) ստորագրությամբ և էլեկտրոնային տարբերակով, CD սկավառակի վրա:

Պատկերները, լուսանկարները և աղյուսակները, համարակալման և բացատրագրերի հետ միասին, պետք է լինեն սև-սպիտակ, A4 ֆորմատից ոչ մեծ և պարզ ընթեռնելի: Պատկերների համակարգչային տարբերակները պետք է լինեն *.bmp, *.tif կամ *.pcx ֆորմատներով, 200-600 dpi ընդարձակմամբ (կետ/դյույմ):

3. Հեղինակները պետք է հետևեն ամսագրերում հոդվածների տպագրման ընդունված կարգին. հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) անվան- հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (ազգանունները), կազմակերպությունը և հասցեն, ներառյալ E-mail-ը (եթե համահեղինակները տարբեր կազմակերպություններին են, բերվում են բոլորի հասցեները՝ կապակցված աստղանիշով), հոդվածի սեղմագիրը (անոտացիան): Ապա հետևում են հոդվածի հիմնական տեքստը, **պարտադիր նշելով հոդվածի տպագրման նպատակը և գիտական նորությունը**, ամփոփագիրը ռուսերեն (հայերեն) լեզվով և սեղմագիր (անոտացիա, 6-8 տող) անգլերեն լեզվով: Վերջում, առանձին էջով, տրվում է օգտագործված գրականության ցանկը:

4. Օգտագործված գրականությունը բերվում է ընդհանուր ցուցակով, առանձին էջի վրա: Հեղինակների ազգանունները գրվում են այբբենական կարգով (առաջինը՝ հոդվածի լեզվով, ապա հայերեն կամ ռուսերեն, վերջում՝ արևմտաեվրոպական լեզուներով): Տեքստում մեջբերվող հղումը բերվում է կլոր փակագծերում, հեղինակի միայն ազգանվան նշմամբ, բնօրինակի լեզվով, եթե հեղինակները երկուսից ավելի են, նշվում է առաջին համահեղինակի ազգանունը և այլն, ապա՝ հրապարակման տարին:

5. Մեջբերվող գրականության ցանկը ձևավորվում է հետևյալ կերպ. ա) գրքերի համար նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, գրքի լրիվ անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը, էջերի քանակը:

բ) Ամսագրային հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, հոդվածի լրիվ անվանումը, ամսագրի անվանումը՝ համաձայն ընդունված հապավումների, հատորը, ամսագրի կամ թողարկման համարը, հրատարակման տարեթիվը, էջերը:

գ) Գրքերում (հավաքածուներում) զետեղված հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, գրքում հոդվածի լրիվ անվանումը (..... գրքում), գրքի անվանումը, որտեղ է հրատարակվել, հրատարակչությունը, էջերը:

դ) Մեղմագրերի համար՝ հեղինակի ազգանունը, անվան-հայրանվան սկզբնատառերը, ատենախոսության անվանումը՝ համաձայն ընդունված հապավման (օրինակ՝ երկրաբ.-հանր.գիտ.թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր), քաղաքը, կազմակերպությունը, որտեղ կայացել է պաշտպանությունը, տարեթիվը, էջերի քանակը:

6. Թվարկված պահանջներին չբավարարող հոդվածները չեն ընդունվում:

7. Մրբագրումից հետո լրացումներ չեն արվում:

8. Խմբագրության կողմից հոդվածի մերժման դեպքում հեղինակին վերադարձվում է բնագրի 1 օրինակը և խմբագրությունն իրեն է վերապահում հոդվածի մերժման պատճառների մասին բանավեճ չվարելու իրավունքը:

ПРАВИЛА ОФОРМЛЕНИЯ РУКОПИСИ

1. В журнале сер. “Науки о Земле” Известий Национальной Академии наук Республики Армения публикуются результаты теоретических, экспериментальных и прикладных исследований, проводимых в Армении и зарубежных государствах в области геологии, геофизики, сейсмологии, инженерной сейсмологии, горного дела, экогеохимии, физической географии. Статьи представляются на армянском, русском или английском языке в окончательно подготовленном виде вместе с сопроводительным письмом и разрешением на опубликование. Все публикации в журнале безгонорарные.

2. Объем статьи, вместе с иллюстрациями, число которых не должно превышать 3, включая “а”, “б” и т.д., таблицами, резюме, библиографией должен составлять около 10 страниц. Текст должен быть подготовлен в редакторе Microsoft Word с использованием шрифтов Times Phonetic Unicode размером 12 и распечатан в интервале 1.5, без переносов с полями (слева – 3.0см, сверху, снизу – 2.5см, а справа – 1.0см). Статья представляется в 2-х экземплярах распечатки, подписанных авторами, а также в электронной версии на диске CD.

Рисунки, фотографии и таблицы вместе с нумерацией и подписью должны быть черно-белыми, форматом А4 и четко выполнены. Компьютерный вариант рисунков должен быть в формате *.bmp, *.tif или *.рех с разрешением 200-600 dpi (точек на дюйм). Подписи прилагают на отдельной странице и оформляются согласно требованиям.

3. Авторам следует придерживаться общепринятой в журнале схемы статьи: название статьи, инициалы и фамилия автора (авторов), организация и адрес, включая E-mail (если соавторы из разных организаций, то приводятся адреса всех, привязанные сносками через звездочку); аннотация статьи (6-8 строк), основная часть текста, **с обязательным указанием цели и научной новизны статьи**, резюме на русском (армянском) языке и аннотация на английском языке. В конце, на отдельной странице, приводится список литературы.

4. Литература приводится общим списком на отдельной странице. Фамилии авторов располагаются по алфавиту (вначале на языке статьи, затем армянские или русские, в конце западноевропейские). В тексте ссылка на литературу приводится в круглых скобках с указанием фамилии автора без инициалов, в оригинальной транскрипции, а если авторов более двух, то указывается фамилия первого соавтора и др., затем год издания.

5. Список цитируемой литературы оформляется следующим образом: а) для книг указывают фамилию автора (авторов) и инициалы, полное название книги, место издания, издательство, год, количество страниц; б) для журнальных статей – фамилия и инициалы автора (авторов), полное название статьи, название журнала согласно принятому сокращению, год издания, номер тома, номер журнала или выпуска, страницы; в) для статей в книгах (сборниках) – фамилия и инициалы автора (авторов), полное название статьи в книге (пишется В кн.: "..."), название книги, место издания, издательство, год издания, страницы; д) для авторефератов – фамилия и инициалы автора, название со ссылкой согласно принятому сокращению (Автореф.дисс. на соиск.уч.ст.канд. или доктора наук), город, организация, где состоялась защита, год, количество страниц.

6. Статьи, не отвечающие перечисленным требованиям, не принимаются.

7. Дополнения в корректуру не вносятся.

8. В случае, если статья отклонена редакцией, автору возвращается один экземпляр рукописи, и редакция оставляет за собой право не вести дискуссию по мотивам ее отклонения.

MANUSCRIPT PREPARATION GUIDELINES

1. Earth sciences series journal of The Proceedings of the National Academy of Sciences of the Republic of Armenia publishes results of theoretical, experimental and applied research conducted in Armenia and abroad in the field of geology, geophysics, seismology, engineering seismology, mining, eco-geochemistry, physical geography, etc. Articles are submitted in Armenian, Russian, or English as final manuscripts enclosed with a cover letter and letter of authorization for publishing. All publications in the journal do not provide for any royalties.

2. Article volume including maximum 3 illustrations with a, b, etc., tables, abstracts, and list of references shall total to about 10 pages. Texts shall be prepared in Microsoft Word editor with 12-point Times fonts and printed 1.5-spaced without hyphenation. Text margins shall be 3.0 from the left, by 2.5 cm from the bottom and top, and 1.0 cm from the right. Article manuscript shall be submitted in two printed copies signed by the authors, and as an electronic version on CD disk.

Figures, photos and tables, numbered and with captions, shall be black-and-white in A4 format and of good quality. Electronic version of figures shall be in *.bmp, *.tif or *.pcx format with resolution of 200-600 dpi (dots per inch). Figure captions are attached on a separate sheet and formatted as required.

3. Authors shall adhere to the following scheme accepted for all journal articles: article title, initials and surname of author (-s), affiliation and address, including e-mail (if authors have different affiliations, asterisked addresses for all must be placed in the footnote), abstract (about 6-8 lines), body text with **mandatory indication of the purpose and the scientific novelty of the article**, summary in Russian (Armenian) and abstract in English. List of references is attached at the end on a separate page.

4. References should be listed on a separate sheet. The authors' surnames should be given alphabetically in the original language of the article and followed by the Armenian or Russian, and West-European). All citations in the text should be referred to in round brackets and should include the single author's surname without initials, in original transcription and the year of publication. In case of 2 and more authors, the first author's surname followed by et al and the year of publication should be provided.

5. List of References is formatted as follows: a) author(s)' surname(s) and initials, year, complete title, place of publication, publisher and number of pages are given for books; b) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title, journal title in standard abbreviation and issue number, followed with number of pages, are given for journal articles; c) author(s)' surname(s) and initials, year of publication, complete article title followed by "In: "... book title ...", place of publication, publisher and number of pages are given for articles in books (collections); d) author's surname and initials, title and standard abbreviation for thesis abstracts (thesis abstract for the degree of Candidate, or Doctor of Geology and Mineralogy), year, city, thesis defense institution, and number of pages.

6. Articles not meeting the listed requirements are not accepted.

7. Additions are not introduced into proofs.

8. One copy of article manuscript rejected by editors is returned to the author and editors reserve the right not to enter into discussion on the reasons for such rejection.